

Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի թափուր պաշտոնները ժամանակավոր զբաղեցնելու մասին

1. Անտառների և անտառային հողերի կառավարման վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 16/1-2.3-2)

Մասնագետը մասնակցում է անտառային տնտեսության կայուն կառավարման հայեցակարգերի, ծրագրերի մշակմանը: Մասնագետը մասնակցում է Հայաստանի Հանրապետության անտառների պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում պետական քաղաքականության իրականացմանը: Մասնագետը իրականացնում է անտառների վերականգնման և անտառապատման, ինչպես նաև սերմնաբուծության, սելեկցիոն-սերմնային տնտեսության ընդլայնման, անտառմելիորատիվ միջոցառումների ծրագրավորման և կատարման նկատմամբ հսկողության աշխատանքները: Ունի այլ իրավունքներ ու պարտականություններ՝ համաձայն պաշտոնի անձնագրի:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- անտառային ճարտարագիտական գործ կամ բնապահպանություն (էկոլոգիա) կամ շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների արդյունավետ օգտագործում կամ բնօգտագործում (գյուղատնտեսական) մասնագիտությամբ **բարձրագույն** կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության անտառային, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքերի, «Քաղաքացիական ծառայության մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», «Բուսական աշխարհի մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

- Աշխատավարձը՝ 212.309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) դրամ:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2. Անտառների և անտառային հողերի կառավարման վարչության առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 16/1-3.2-1)

Մասնագետը մասնակցում է անտառային տնտեսության կայուն կառավարման հայեցակարգերի, ծրագրերի մշակմանը: Մասնագետը մասնակցում է ՀՀ անտառների պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում պետական քաղաքականության իրականացմանը: Մասնագետը մասնակցում է անտառներում անտառավերականգնման, խնամքի, սանիտարական և այլ հատումների, անտառտնտեսական ճանապարհների կառուցման և նորոգման պլանավորմանը, կատարման նկատմամբ հսկողության իրականացմանը: Ունի այլ իրավունքներ ու պարտականություններ՝ համաձայն պաշտոնի անձնագրի:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- անտառային ճարտարագիտական գործ կամ բնապահպանություն (էկոլոգիա) կամ շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների արդյունավետ օգտագործում կամ բնօգտագործում (գյուղատնտեսական) մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության անտառային, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքերի, «Քաղաքացիական ծառայության մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», «Բուսական աշխարհի մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում:

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

- Աշխատավարձը՝ 150.799 (մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր ինսունինը) դրամ:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

* * *

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում,
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
 - արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին.
 - մեկ լուսանկար 3x4սմ չափի,
 - անձնագրի պատճենը:

**Փաստաթղթերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության
Բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի անձնակազմի
կառավարման բաժնում կամ էլեկտրոնային փոստի միջոցով
m.badalyan@forestcommittee.am հասցեով ժամը 10⁰⁰-ից 13⁰⁰-ը ամեն օր, բացի
շաբաթ և կիրակի օրերից**

Հասցե՝ ք. Երևան, Արմենակյան 129 (3-րդ հարկ),
հեռ.՝ 010 650 966

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 24.01.2019թ.: